ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

ի պատասխան Ձեր 15.01.2024թ. հ.078 գրության՝ տեղեկացվում է, որ Նոր Նորք վարչական շրջանի Գյուրջյան փողոցի հ.27 հասցեում կառուցապատող՝ «ՄԵԾ ՍՅՈՒՆԻՔ» ՓԲԸ-ին բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նպատակով 20.05.2020թ. Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվել է հ.01/18-07/2-44467-442 նախագծման թույլտվությունը: Այնուհետև 22.11.2022թ. ի լրումն և ի փոփոխություն վերը նշված նախագծման թույլտվության տրամադրվել է հ. 01/18-07/1-Դ-103644-1032 նախագծման թույլտվությունը:

Նշված նախագծման թույլտվության հիման վրա մշակված նախագիծը մինչ համաձայնեցման ներկայացվելը՝ ՀՀ գործող օրենսդրության պահանջների համաձայն ենթարկվել է նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների համապատասխանությանը հավաստող փորձաքննությունների՝ ստանալով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 02-ի հ.49-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի հ.190 (պետական համալիր փորձաքննություն), «ԳՐԱՆԴ ՔՆԹՐՈԼ» ՍՊ ընկերության (լիցենզիա ՔՊԼ 17849) 03.05.2023թ. հ.06/2023 և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 27.04.2023թ. հ.ՔՏՄ/09.2.2/9131-23 փորձագիտական եզրակացությունները:

Հիմք ընդունելով վերը նշված փորձաքննական եզրակացությունները՝ 05.12.2023թ. Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցվել է հ.01/18-05/2-Դ-139511-1157 նախագիծը և տրամադրվել հ.01/18-Դ-139511-2548 շինարարության թույլտվությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ